



3. ՕՉԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՆԿԱՆԻՑ ՇԱՏ ԷԼԱՎ

Մի կնիկ շատ շար էր, ընդրա մարդը ինչ անըմ էր, վրեն չէր կարրմ. ընդրա ձեռիցը դատ էր անըմ:

Մեկ օր ջվալ վեր կալավ, կնկան ասեց.

— էթանք թիթեն թոփ անելու: (Որ տանի, շոլումը կորցնի)՝

Գնաց, շոլումը մի հատ ֆոր կար:

Կնկան ասեց.— Արի՛, կախ տամ, ջուր հանա, խմենք:

Կախ տվեց ֆորն ու մի հատ քար վեր կալավ, քցեց բերնին. գնաց պտրտվեց, մի հատ օձ բռնեց, բերեց, քցեց էդ ֆորը, որ էդ օձը կնկան տա սպանի:

Գնաց, մի հատ էլ դել բերեց, քցեց ֆորը:

Գնաց մի էլ առջ բռնեց, բերեց, քցեց ֆորը:

Կնիկը ասեց.— Ըղրանք քցըմ ես, ինչ. դու ո՞ւր պտի պրծնես իմ ձեռիցը. յավաշ, ըսդիան դուս գամ, քու հախիցը կգամ:

Ասեց.— էդ ջանավարները քեզ սաղ չեն թողնի, որ դուս գաս:

Մարդը թողեց, էկավ տուն. մի շաբաթ մնաց, ասեց. «Հալա էթամ, տենամ ի՞նչ էլավ»:

Գնաց, քարը շուռ տվեց, ջանավարները ձեն տվեցին.

1 Փակագծի բացատրությունը ասացողին է (Մ. Կ.):

— Աստուծո սիրուն, ա՛յ մարդ, դատ-պեղատ ըսդրա ձեռքից
մեզ ազատա, էս անզգամ կնկա ձեռքը, քու լավությունի տակիցք
դու կգանք:

Պարանը քցեց, մին-մին հանեց, բրախ տվեց:

Կնիկն էլ ասեց.— Ընձ էլ հանա, թե չէ շես պրծնի իմ ձեռքից:

Ասեց.— Խելոքացել ե՞ս, որ հանեմ:

Ասեց.— էդ քու բանը չի, ինձ հանա՛, ասըմ եմ:

Պարանը քցեց, կնկան էլ հանեց:

Կնիկը դուս էլավ. ֆորի դրադը մի լավ հեղդեց իրա մարդի՞ն,
ասեց.

— Ֆողեմ գլուխդ, հրմի իմ տունը-տեղը ի՛նչ էլավ:

Վե կացան, գնացին տունը:

Իրիկունը գելը դուռը ծեծեց:

Գնաց դուռը բացնց, տեհավ գելն ա. հինգ հատ ոխշար բերեց,
ասեց.

— Դե՛, դու որ էն լավությունը արիր ընձի, բրախ տվիր, բե-
րեցի քեզ էս ոխշարները:

Կնիկն ասեց.— Ոխշարը որդիա՞ն ա:

Ասեց.— էն քու կշտիդ գելը բերեց:

Ասեց կնիկը.— Կարա՞ չբերի, էն իմ զարպն էր, բերեց:

էն էքսի օրն էլ դուռը ծեծեցին. առջն էկավ, մի դավաբե՞
ճոթ բերեց:

— էդ ո՞վ բերեց,— հարցրեց կնիկը:

Ասեց.— Առջը բերեց:

Կնիկն ասեց.— է՛յ գիտի զարպ, առջն էլ բերեց իմ քարդիցը-
ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— գելն ու առջը որ ընձանից վախում
են, դու որտի կմնաս:

— Կնի՛կ,— ասեց մարդը,— դարտ մի անի, դավեն ու ոխշա-
րը արեցինք դավուրմա, ճոթն էլ քեզ բոլ ա, ի՛նչ կուղես արա՛:

Մեկ էլ տեհան, դալալը ձեն ա տալի քուշեքը.— Մի հատ բեռ
թաքավորի դավով կորել ա. ո՞վ որ գթավ, բերեց, պարդն կտանք,
որ չբերեցին, ո՛ւմ տանը գթանք էն մարդը կորստական ա:

Կնիկը լսեց, էկավ տուն, ասեց.

— էդ դավեն թաքավորական ա:

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, սուա կաց. աստուծո խաթր, էդ բա-
նը վերջանա, էթա:

Կնիկը ասեց.— Խի՞ սուս պտի կենամ, կէթամ, կասեմ. թաքավորն ընծի պարգև պտի՞ տա, քեզանից էլ կպրծնեմ, անշախ տեղն էկավ:

Մարդը ինչգար մուննաթ արեց, չլսեց, վեր կացավ, գնաց. գնաց թաքավորին ասեց.

— Քու դավեն իմ մարդն ա բերե, դավեն մորթե, դավուրմա ենք արե, ճոթն էլ կտրատեր ենք, բիրատի յորդան, դոշակ մինթանա, բան ենք արե, իմ մարդը չէր թողնում, ես զոռով փախե էկել եմ. ասեցի. «Թաքավորական մալ ա, տար տուր», ականջ շարեց:

Թաքավորը էրկու մարդ ճանփեց. կնիկը տարավ, նշանց տվեց: էդ մարդին տարան քցեցին դութսախխանեն:

Թաքավորը վճռեց, առավոտը էդ մարդը հեղդեն:

էդ օձը իմացավ, էկավ մտավ պալատը: Մի վեց ամսական թոռ ուներ թաքավորին, փաթըթվավ էն էրեխու շլնքին ու պառկավ: Հարսը բիրտան տեհավ օձը էրեխու շլնքին, ճվաց ու փախավ:

Մարդն ասեց.— էդ խի՞ ճվացիր:

Ասեց.— Օձը փաթըթվել ա էրեխու շլինքը:

Թաքավորի տղեն ասեց.— Ձեռ շտաք, թաքավորին իմացնենք:

Գնացին թաքավորին իմացրին: Թաքավորը վե կացավ, էկավ. թամաշա արեց, որ օձը փաթըթվել ա էրեխու վիզը, գլուխը դրել ա էրեխու բերնի վրեն: Թաքավորը ասեց.

— Ըդրան իլաճ չըլի, մի հնարով թե հետ ըլի:

Ըստի, ընտի որ ասեցին, էդ դութսախխանի մարդը ասեց. «Ըհը, էն իմ օձն ա, իմ հավարին էկել ա»:

Ասեց.— Գնացեք թաքավորին ասեք, ընծի ազատի, էն օձը հետ տանեմ, որ էրեխեն սկի չիմանա:

Թաքավորն էդ մարդը կանչեց. գնաց, թաքավորի աղաքը կաղնեց, գլուխ տվեց:

Թաքավորը ասեց.— Կարա՞ս օձը հետ անես. քեզ կբախշիմ ինչ որ մեղք ես արե:

Ասեց.— Ինձ որ բախշեցիր, իմ օձին էլ ձեռ շտաք, շսպանեք:

Ասեց.— Գնա՛, հետ արա, իրավունք ունես:

Գնաց մտոր. փեշը բռնեց, ասեց.— Օձ ջան, արի՛, քու էհթիպարը իմ կնկանից շատ էր:

Օձը հետ էլավ, կիտվավ ըտրա գոգը:
 Փեշը կոլոնեց ու գնաց թաքավորի մոտը, ասեց.— Թաքավոր
 ապրած, հըրես, հետ արեցի. օձն էլ գոգս ա:
 Թաքավորն ասեց.— Ինչ արեցիր, որ հետ արեցիր:
 Ասեց.— Բան չարեցի, ասեցի. «Օձ ջան, քու էհթիպարը իմ
 կնկանից շատ էլավ», հետ էլավ օձը:
 Ասեց.— էդ առարկեն ինձ պտի ասես:
 Ասեց.— Յավաշ, օձը տանեմ, շուր բրախ տամ, գամ, ասեմ:
 Տարավ, օձը բրախ տվեց, էկավ, թաքավորի կշտին նստեց,
 ասեց, ինչ որ էլել էր:
 — Հըմի, ասեց, ինչ որ բալբալեք քաշըմ եմ, էդ կնկանից ա,
 բերեց դարաղաճի տակ, ընձի պտի հեղգեր, էդ օձն ընձի ազա-
 տեց, ընդուր ասեցի. «Քու էհթիպարը իմ կնկանից շատ ա»:
 Թաքավորը ասեց.— էն կնկան բերեք, հեղգեք, էս մարդին մի
 լավ կնիկ ուզեք:
 էդ կնիկ հեղգեցին, էս մարդն էլ ազատվավ մոտիցը:
 էդ բալբալեքը էկավ, կնկան գլխին կաղնեց:

